ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (1920—1940 ԹԹ.)*

Մ. Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո գյուղի սոցիալիստական վերակառուցումը հրամայաբար պահանջում էր գյուղական աշխատավորությանը դուրս բերել անգրագիտության խավարից, բարձրացնել նրա կուլտուրական մակարդակը։ Անհրաժեշտ էր հասնել գյուղացիների կրոնական նախապաշարումների վերացմանը, արմատախիլ անել նրանց մանր սեփականատիրական հայացքները և զարգացնել կոլեկտիվիստական գիտակցությունը։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ «աշխատավոր մասսաները, բանվորների և գյուղացիների մասսաները պետք է... իրենց վերադաստիարակեն կոմունիզմի շինարարության համար— առանց դրան անկարելի է ձեռնամուխ լինել շինարարության գործին»[1]։

Կոմունիստական կուսակցությունը, նախաձեռնելով կուլտուրական հեղափոխությունը, առանձնակի ուշադրություն էր դարձնում աշխատավորական մասսաների կոմունիստական դաստիարակության, դիտական աշխարհայացքի մշակման և կուլտուր-լուսավորական մակարդակի բարձրացման կարևորագույն խնդիրների վրա։ Հիրավի, սկսած սովետական իշխանության առաջին իսկ օրերից, ժողովրդական մասսաների քաղաքական դաստիարակությունը կոմունիզմի ոգով դարձավ պետական կարևորագույն խնդիր[2]։

Վ. Ի. Լենինի ստորագրությամբ 1920 թ. նոյեմբերի 23-ին հրապարակվեց ՌՍՖՍՀ ժողկոմխորհի դեկրետը՝ քաղաքական լուսավորության գլխավոր վարչություն (քաղլուսգլխվարչություն) ստեղծելու մասին։ Քաղլուսգլխվարչության նախագահ նշանակվեց կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Ն. Կ. Կրուպսկայան։ Այդ դեկրետով նաև ստեղծվեցին քաղլուսվարչության նահանգային և գավառական օրգաններ։

Քաղլուսգլխվարչության ղեկավարությամբ աշխատավոր բնակչությունը սկսեց վերացնել իր անգրագիտությունը, ստանալ կոմունիստական դաստիարակություն, կուլտուրան և արվեստը դարձնել իր սեփականությունը, ոգեշնչվելով սոցիալիստական շինարարության պաթոսով։

Ինչպես տնտեսական, այնպես էլ կուլտուր-լուսավորական աշխատանքների կազմակերպման գործում կոմունիստական կուսակցությունը գլխավոր

---

* *1920—1930-ական թվականներին Սովետական Հայաստանում կուլտուրական շինարարության հարցերը հանգամանալից լուսաբանվել են Կ. Խուդավերդյանի «Культурная революция в Советской Армении (1920—1940 гг.)», Երևան, 1966, ինչպես նաև Վ. Ղազանչյանի «Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը», Երևան, 1964, աշխատություններում։*

1 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. III, Երևան, 1964, էջ 560։

2 К. Худавердян, նշվ. աշխ., էջ 69։

ուշադրությունը բևեռում էր համեմատաբար հետամնաց ազգային շրջանների վրա։ Կուսակցության X համագումարը «Կուսակցության հերթական խնդիրներն ազգային հարցում» բանաձևում, որպես ազգային շինարարության բնագավառում կարևոր հարցերից մեկը, խնդիր դրեց օգնել ոչ ռուս ժողովուրդներին՝ «... զարգացնելու իրենց մոտ մամուլը, գպրոցը, թատրոնը, ակումբային գործը և առհասարակ կուլտուր-լուսավորական հիմնարկները մայրենի լեզվով»[3]։

Հայաստանում քաղաքական լուսավորության աշխատանքների հիմքը դրվեց 1921 թ. ապրիլ-մայիս ամիսներին։ Մինչև 1922 թ. այդ աշխատանքները վարում էր լուսժողկոմատի արտադպրոցական բաժինը, որը հետո վերափոխվեց քաղլուսգլխավարչության։ Նրա նախագահ նշանակվեց ՀԿԿ Կենտկոմի ագիտպրոպ բաժնի վարիչի տեղակալ Դ. Մ. Դղնունին[4]։

1921—1922 թթ. հանրապետության շրջկենտրոններում և գյուղերում սկսեցին բացվել քաղաքական լուսավորության առաջին օջախները՝ խրճիթ-ընթերցարաններն ու դրադարանները։ Այս աշխատանքներն ավելի բարվոք վիճակում դրվեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1923 թ. հունիսյան համակուսակցական խորհրդակցությունից, այնուհետև՝ քաղլուսաշխատողների 1923 թ. համամիութենական առաջին համագումարից հետո, երբ ընդունվեցին քաղլուսաշխատանքներն աշխուժացնելու վերաբերյալ գործնական որոշումներ[5]։

ՀամԿ(բ)Կ XIII համագումարը լոզունգ ընդունելով «դեպի մասսաները», մեծ նշանակություն տվեց գյուղի կուլտուր-լուսավորական աշխատանքներն էլ ավելի լավ կազմակերպելու հարցերին։ Նրա ընդունած բանաձևում ասված էր. «քաղլուսաշխատանքը գյուղում ներկայումս ամենաէականն է կոմունիզմի հաղթանակի տեսակետից»[6]։ Համագումարը հրահանգավորեց գավգործկոմներին, որ շրջանային ֆինանսական նախահաշիվների մեջ մտցնեն քաղլուս-հիմնարկների ծախսերը։

Սակայն հասկանալի պատճառներով պետությունը դեռևս բավարար միջոցներ չէր կարող տրամադրել կուլտուր-լուսավորական աշխատանքներին։ Այդ պայմաններում աշխատավորական մասսաները, հատկապես գյուղացիությունը, զգալով կուլտուր-լուսավորական հիմնարկների դերն ու նշանակությունը, հանգես էին բերում հասարակական նախաձեռնություն, որի շնորհիվ բացվում և պահվում էին խրճիթ-ընթերցարանները։ Գյուղացիներն իրենց դրսևորում էին որպես հայրենի գյուղի կուլտուրայի վերափոխման ջերմ կողմնակիցներ[7]։ Բավական է նշել, որ միայն 1923 թ. հանրապետությունում գյուղացիներն իրենց հաշվին բացել և պահում էին 61 խրճիթ-ընթերցարան[8], որոնց թիվը գնալով աճում էր։ Գյուղացիությունը յուրահատուկ մրցություն էր ծավալել խրճիթ-ընթերցարանները գրականությամբ, լրագրերով, թատերական բեմերով և այլ հարմարություններով ապահովելու համար։ Այսպես, Քարվանսարա (Իջևան) գյուղի աշխատավորները խրճիթ-ընթերցարանին նվի-

---

3 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս 1-ին, Երևան, 1954, էջ 713։

4 К. Худавердян, նշվ. աշխ., էջ 71։

5 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 2, էջ 166—167։

6 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս 2-րդ, Երևան, 1955, էջ 69։

7 К. Худавердян, նշվ. աշխ., էջ 83։

8 ՀՍՍՀ հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 163, ց. 6, գ. 193, թ. 24։

բեցին 300 փութ ցորեն[9]։ Արտաշատի շրջանի Դվին և Թափաբաշ (Հնարերդ) գյուղերը մեծ սիրով խրճիթ-ընթերցարաններին էին նվիրում գրականություն և այլ իրեր ու հարմարանքներ[10]։ Իրենց խրճիթ-ընթերցարանների համար նորադավիթցիները բաժանորդագրվեցին 4 օրինակ «Մաճկալ», շենգավիթցիները՝ 10, ինչպես նաև 1 օրինակ «Խորհրդային Հայաստան»։ Թաղագյուղացիները խրճիթ-ընթերցարան ունենալու համար մրցման կարգով նվիրաբերեցին մեծ գումար[11]։ 1924 թ. հունվարից հանրապետության գյուղական խրճիթ-ընթերցարանները լրագրերով բաժանորդագրելու համար անցկացվեց մրցություն, որի առաջին նախաձեռնողը եղավ Ն. Ախտայի (Հրազդան) շրջանի Բաբաքշի (Աղավնաձոր) գյուղի աշխատավորությունը։ Բարաքշեցիներն իրենց խրճիթ-ընթերցարանի համար բաժանորդագրվեցին 7 օրինակ «Մաճկալ» և մրցման հրավիրեցին Ռնդամալի (Աթարբեկյան) գյուղացիությանը։ Ռնդամալցիներն ընդունեցին մրցահրավերը և 8 օրինակ «Մաճկալ» բաժանորդագրվեցին իրենց խրճիթ-ընթերցարանի համար։ Նրանք իրենց հերթին մրցման հրավիրեցին շրջկենտրոնի կոմբջիջին, Քարվանսարա, Թայչարուխ (Մեղրաձոր) և այլ գյուղերի[12]։

Այսպիսով, չնայած առկա դժվարություններին, այն է՝ անհրաժեշտ կուլտուրական կադրերի բացակայությանը, հին բարքերի ու կրոնական սովորությունների պահպանման, նյութական սուղ պայմաններին և այլն, երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին հանրապետության գյուղական կուլտուր-լուսավորական օջախները ապրեցին որոշակի զարգացում։ Դա երևում է նաև ներքոհիշյալ աղյուսակից[13]։

Հանրապետության խրճիթ-ընթերցարանների զարգացման դինամիկան ժողտնտեսության վերականգնման տարիներին։

№	Գավառներ	Ուսումնական տարիներ			
		1922/1923	1923/1934	1924/1925	1925/1926
1	Երևան	30	64	75	56
2	Լենինական	52	94	91	81
3	Էջմիածին	30	30	55	20
4	Լոռի-Փամբակ	26	35	43	21
5	Դիլիջան	20	36	30	20
6	Ն. Բայազետ	8	30	34	27
7	Դարալագյազ	30	18	16	17
8	Զանգեզուր	—	12	53	60
9	Մեղրի	18	2	8	16
	Ընդամենը . . .	214	321	405	318

9 «Մաճկալ», 25. III. 1924։
10 Նույն տեղում, 14. VI. 1922։
11 Նույն տեղում, 10. V. 1922։
12 Նույն տեղում, 15. I. 1924։
13 «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Երևան, 1926, էջ 309—310։

Ինչպես տեսնում ենք, 1925—1926 ուսումնական տարում խրճիթ-ընթերցարանների քանակը նվազել էր։ Դա բացատրվում է նրանով, որ տարերայնորեն բացվածները փակվում էին։ Բայց նրանց սկսում են փոխարինել գրադարաններն ու ակումբները։ Այսպես, եթե 1924 թ. Հանրապետությունում գործում էր 86 գրադարան, որից 76-ը գյուղական վայրերում[14], ապա 1925 թ. վերջերին՝ 206 գրադարան և 36 ակումբ, որից գյուղական վայրերում՝ 165 գրադարան և 4 ակումբ[15]։

Այդ շրջանում խրճիթ-ընթերցարանների աշխատանքի հիմնական բովանդակությունը կազմում էր կուսակցության և կառավարության որոշումների, իսկ գյուղում՝ առանձնապես լենինյան կոոպերատիվ պլանի պրոպագանդումը։ Խրճիթ-ընթերցարաններին կից գործում էին գեղարվեստական ինքնագործունեության, գյուղատնտեսական, կենցաղային, քաղաքական, բնագիտական, բատրակների անգրագիտության ու կիսագրագիտության վերացման, հակակրոնական, երեխաների անապաստանության դեմ պայքարող և այլ խմբակներ։ Համարյա բոլոր խրճիթ-ընթերցարանները պարբերաբար հրատարակում էին պատի թերթեր։

Խրճիթ-ընթերցարանների գործունեության մեջ կարևոր դեր ուներ ագիտատների կիրառման մեթոդը, որը նյութը ըմբռնելի, հասկանալի ու համոզիչ դարձնելու լավագույն միջոցներից էր։ Ագիտատերը կազմակերպվում էին բերքատվության բարձրացման, կենցաղային հետամնաց սովորությունների վերացման և այլ հարցերի շուրջը։ Դատերի ժամանակ բազմակողմանի պարզաբանվում էին չարիք ծնող բոլոր պատճառներն ու հետևանքները, չարիքի պատճառած անհատական և հասարակական վնասի չափը, նշվում այն կանխելու միջոցառումները։

Խրճիթ-ընթերցարաններն օգնում էին լուծելու գյուղացիների առօրյա խնդիրները, պատասխանում գյուղացու այն բոլոր հարցերին, ինչը վերաբերում էր կոոպերատիվին, արհմիությանը, գյուղատնտեսությանը, բժշկությանը, կառավարական օրենքներին, հարկերին, կանանց իրավունքներին, պաշտպանում էին բատրակի ու չքավորի շահերը կուլակի շահագործումից։

Այս ամենը գյուղացու մեջ հետաքրքրություն էր առաջացնում դեպի խրճիթ-ընթերցարանի աշխատանքը։ 1924—1925 թթ. խրճիթ-ընթերցարանների աշխատանքներն էլ ավելի բարելավելու նպատակով հայտարարվեց մրցանակաբաշխություն։ Մրցանակի արժանացան հինգը. Զանգեզուրից՝ Բռնակոթի, Դիլիջանից՝ Սևքարի, Երևանի գավառից՝ Բաշգյառնիի (Գառնի), Դարալագյազից՝ Քեշիշքենդի (Եղեգնաձոր), Ղարաքիլիսայից (Կիրովական)՝ Վորոնցովկայի (Կալինինո) գյուղական խրճիթ-ընթերցարանները[16]։

Այսպիսով, Սովետական Հայաստանի գյուղն ապրում էր կուլտուր-լուսավորական զարթոնք։ 1925 թ. գյուղական գրադարանների բաժանորդների թիվը արդեն հասել էր 9.643 մարդու[17]։

Ժողովրդական տնտեսության վերականգնումը իրական հող ստեղծեց երկրի ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Դրա-

---

14 «Культурное строительство Армянской ССР», Ереван, 1962, стр. 13—14.

15 ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 14, գ. 1, թ. 13—14։

16 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 2, էջ 167։

17 ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 14, գ. 1, թ. 14։

նով իսկ ստեղծվեց կուլտուրական հեղափոխության այն պատվանդանը, որն իր հերթին խթանեց ժողովրդական տնտեսության արագ ու արդյունավետ զարգացմանը։

Համկ(բ)կ XV համագումարը առաջ քաշեց քաղլուսաշխատանքների ծավալման ու խորացման խնդիրը. պետք էր լուծել գյուղական մասսաների կուլտուր-դաստիարակչական և քաղաքական լուսավորության կարևորագույն պրոբլեմները։ Համագումարը խնդիր դրեց առաջին հնգամյա պլանի դիրեկտիվներում հատուկ ուշադրություն դարձնել նախկինում հետամնաց ազգերի ու ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական զարգացմանը և նախատեսել նրանց զարգացման ավելի բարձր տեմպ։

Ազգային շրջանների կուլտուր-լուսավորական գործի զարգացման նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության վկայություններից է այն փաստը, որ 1926 թ. տվյալներով Հայաստանի յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանին ընկնում էր 6—7 գյուղական բնակավայր (այդ թվականին Հայաստանում հաշվվում էր շուրջ 1.900 գյուղական բնակավայր), իսկ Ռուսաստանում՝ 20—30[18]։

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը պահանջում էր ընդարձակել և վերակառուցել գյուղական կուլտուր-լուսավորական հիմնարկները։ 1930 թ. նոյեմբերին քաղլուսաշխատողների Մոսկվայում կայացած համառուսաստանյան խորհրդակցությունը, հավանություն տալով Հյուսիսային Կովկասի կազմակերպությունների 1929 թ. նախաձեռնությանը, որոշում ընդունեց շրջանային կենտրոններում և սովխոզներում ստեղծել սոցիալիստական կուլտուրայի տներ, համատարած կոլեկտիվացման շրջաններում խրճիթ-ընթերցարանները վերակազմել կոլտնտեսային ակումբների, սովխոզներում՝ սովխոզային ակումբների, իսկ փոքր կոլտնտեսությունների ու սովխոզների արտադրական տեղամասերում՝ ստեղծել կարմիր անկյուններ։

Արդեն 1930 թ. վերջերին և 1931 թ. գարնան ամիսներին Հայաստանի այն շրջաններում, որտեղ գյուղացիությունը հիմնականում ընդգրկվել էր կոլեկտիվ տնտեսություններում, խրճիթ-ընթերցարանները սկսեցին վերածվել ակումբների։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն 1932 թ. մարտի 12-ին որոշում ընդունեց քաղլուսհիմնարկների վերակառուցման մասին և խնդիր դրեց բոլոր շրջկենտրոններում կազմակերպել սոցիալիստական կուլտուրայի տներ այն հաշվով, որ նրանք դառնան գյուղի վերակառուցվող քաղլուսհիմնարկների աշխատանքի կազմակերպման կենտրոններ։ Կենտկոմը որոշեց ակումբների ցանցը առաջին հերթին ընդարձակել արդյունաբերական շրջաններում[19]։ 1932 թ. հանրապետությունում արդեն գործում էին 53 ակումբ, իսկ գյուղական վայրերում՝ 358 խրճիթ-ընթերցարան, 205 կարմիր անկյուն[20] և 269 գրադարան[21]։

---

18 «Գյուղի կոմունիստ», 1929, № 9—10, էջ 67։

19 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 1, ց. 19, գ. 78, թ. 1։

20 «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934 թթ.), խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ», Երևան, 1935, էջ 123։

21 «Культурное строительство Армянской ССР», стр. 101.

Գյուղական կուլտուր-լուսավորական հիմնարկները, ղեկավարվելով կուսակցության XV համագումարի որոշումներով և պրոպագանդելով նրա առաջադրած խնդիրները, կարևոր գեր էին կատարում գյուղատնտեսության կոլեկտիվացման շրջանում։ Այդ հիմնարկները իրենց աշխատանքով օգնում էին կոմունիստական կուսակցությանը՝ նախապատրաստելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, նպաստում էին կոլտնտեսությունների ամրապնդմանը և մենատնտես գյուղացիների շրջանում պրոպագանդում հանրային տնտեսության առավելությունները մանր ապրանքայինի նկատմամբ։ Իր հերթին գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց քաղլուսաշխատանքների հետագա ծավալման համար։ Սոցիալիստական տնտեսությունը գյուղացուց պահանջում էր տիրապետել հողագործության ագրոնոմիային, գյուղատնտեսական մեքենաներին և սոցիալիստական անասնապահության եղանակներին։ Այս գործում գյուղացուն օգնության էին հասնում խրճիթ-ընթերցարանները, ակումբներն ու գրադարանները, կարմիր անկյունները, ինչպես նաև անգրագիտության և կիսագրագիտության վերացման խմբակներն ու գյուղերիտ դպրոցները։ Այստեղ գյուղացին ընթերցանության, ղրույցի, դեկուցման, դասախոսության, գեղարվեստական ինքնագործունեության, ռադիոլսումների, խմբակային պարապմունքների միջոցով ձեռք էր բերում քաղաքական, տնտեսագիտական և այլ գիտելիքներ։

Առաջին հնգամյակում սոցիալիստական շինարարության հետևանքով վերջնականապես արմատախիլ արվեցին կապիտալիզմի արմատները գյուղում, կանխորոշվեց շահագործողական տարրերի լիակատար վերացումը։ Կուսակցությունն այդ հաղթանակներին հասավ բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության լայն մասսաների հեղափոխական ակտիվության վիթխարի աճի, սոցիալիստական մրցության ու հարվածայնության հսկայական վերելքի շնորհիվ, որ վկայում էր մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման, կուլտուրական հեղափոխության բնագավառում ունեցած նշանակալից հաջողությունների մասին։

Ժողովրդական տնտեսության հուժկու վերելքն առաջին հնգամյակի տարիներին անհրաժեշտ բազա նախապատրաստեց սոցիալիստական կուլտուրայի հզոր վերելքի համար։ Այժմ արդեն կուլտուրական հեղափոխության խնդիրներն ամբողջովին բնորոշվում էին երկրորդ հնգամյակի քաղաքական ու տնտեսական հարցերով, որոնց հիմնական խնդիրն էր ամրապնդել կոլեկտիվ և պետական տնտեսությունները, բարձրացնել բերքատվությունը, վերջնական հարված տալ կուլակության մնացորդներին, մարդկանց գիտակցության միջից արմատախիլ անել կապիտալիզմի վերջին մնացուկները և այլն։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինն իրավացիորեն նշել է, որ այդ արդյունքին կարելի է հասնել միայն «... կուլտուրայի ընդհանուր բարձրացմամբ, բանվորա-գյուղացիական մասսան մեր այժմյան մասսայից ավելի կուլտուրական դարձնելով»[22]։ Տարեցտարի բարձրանում էր գյուղական բնակչության կուլտուրական մակարդակը, որն օգնում էր նրան լուծելու իր առջև դրված տնտեսական խնդիրները և վերադաստիարակվելու սոցիալիզմի ոգով։

Գյուղի քաղլուսավորական աշխատանքների հզոր վերելքը սերտորեն կապված էր գյուղական ակումբի հետ, որը Ն. Կ. Կրուպսկայան համարել է

---

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 71։

«սոցիալիզմի կառուցման օջախ»[23], նշելով, որ «... ակումբային աշխատանքը կօգնի ոչ միայն «կուլտուրապես հղկել մասսաներին», այլև կկազմակերպի... բանվորական մասսաների ինքնագործունեությունը կուլտուրական ճակատում և դրանով իսկ կօգնի լուծել կյանքի կողմից առաջ քաշվող մի շարք բարդ, բայց չափազանց կարևոր հարցեր»[24]։

Կոլտնտեսային ակումբներ ստեղծվեցին առաջին հերթին այն գյուղերում, որտեղ կոլտնտեսությունները տնտեսապես և կազմակերպորեն ամրապնդվել էին։ Կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները նախաձեռնություն էին հանդես բերում իրենց միջոցներով պահպանելու ակումբները կամ ամրապնդելու նրանց նյութական բազան։ Դյուզքանգի (Ախուրյան) կոլտնտեսային ակումբը, օրինակ, սպասարկում էր 3 գյուղ, որտեղ և կազմակերպել էր կարմիր անկյուններ։ 1933 թ. առաջին եռամսյակում կոլտնտեսությունն ակումբին հատկացրել էր 75, իսկ գյուղսովետը՝ 200 ռ.։ Կոլտնտեսությունը ակումբի համար բաժանորդագրվել էր ամսագրեր և թերթեր, կատարել 2,5 հա ցանք։ Ակտիվի կազմակերպած մրցության շնորհիվ ակումբի գրադարանի համար ձեռք էր բերվել 320 օրինակ նոր գիրք։ Բացի այդ, գյուղացիներն ակումբի համար հանգանակել էին 1500 ռ.[25]։ Փոքր Ղարաքիլիսայի (Ազատան) ակումբի կազմակերպման հենց առաջին օրը նրա օգտին հավաքվեց 150 ռ.[26]։ Ակումբների կազմակերպած թատերական ներկայացումներից ստացված գումարն օգտագործվում էր նրանց ամրապնդման համար։ Այսպես, օրինակ, Ջաջուռի ակումբը երկու ներկայացումներից ստացած 360 ռ. գումարը տրամադրեց ընթերցարանի սարքավորմանը[27]։ Նման օրինակները բազմաթիվ են։

ՀԿ(բ)Կ-ն մեծ ուշադրություն էր դարձնում ակումբային աշխատանքներին և ակումբները որակյալ կադրերով ապահովելու խնդրին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. մայիսի 17-ի հատուկ որոշմամբ արգելվեց կոլտնտեսային ակումբների աշխատողներին երկու տարի ժամանակով այլ աշխատանքի փոխադրելը։ Կենտկոմը միաժամանակ որոշեց գյուղն էլ ավելի ապահովել բանիմաց և կուլտուրական կադրերով[28]։ Միայն 1933 թ. քաղլուսաշխատանքներն ուժեղացնելու նպատակով 100-ից ավելի բարձրագույն և միջնակարգ կրթությամբ կուսակցական և կոմերիտական աշխատողներ ուղարկվեցին գյուղ[29]։ Կոլտնտեսային ակումբների աշխատանքները ղեկավարելու համար լուսժողկոմատում առանձնացվեց հատուկ հրահանգիչ։ Կոլտնտեսային ակումբների աշխատանքների բարելավման նպատակով կոլտնտեսությունները սկսեցին տիպային շենքեր կառուցել ակումբների համար։ Հայաստանի պետական հրատարակչությունը կոլտնտեսային ակումբների, խրճիթ-ընթերցարանների և կուլտուրայի տների համար մեծ տպաքանակով հրատարակեց գյուղատնտեսական դրականություն, պլակատներ, լոզունգներ ու դիագրամներ։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների վերաբերյալ

---

23 Ն. Կ. Կրուպսկայա, Կուլտուր-լուսավորական աշխատանքների մասին, Երևան, 1958, էջ 135։

24 Նույն տեղում, էջ 160։

25 «Բանվոր», 14. IV. 1944։

26 Պ. Տոլյան, Ակումբային աշխատանքը գյուղում, Երևան, 1933, էջ 43։

27 Նույն տեղում։

28 ՄԱԻ արխիվ, ֆ. 1, ց. 21, գ. 8, թ. 18։

29 Նույն տեղում, ց. 25, գ. 369, թ. 5։

1929 թ. դեկտեմբերին և 1930 թ. հունվարին Հանրապետության գավառներն ուղարկվեց 19.400 օրինակ գրականություն[30]։ Հայաստանի գյուղհրատը 1933 թ. գյուղի համար մեծ տպաքանակով լույս ընծայեց 33 անուն դիրք, իսկ 1934 թ.՝ 129 անուն քաղաքական և գյուղատնտեսական թեմայով գրքեր ու բրոշյուրներ։ Միայն 1933 թ. ընթացքում գյուղ ուղարկվեց 100 անուն գյուղատնտեսական գիրք ու բրոշյուր[31]։

Գնալով աճում էր գյուղական ակումբների քանակը։ Եթե 1925 թ. Հանրապետության գյուղերում հաշվվում էր միայն 4 ակումբ, ապա երկրորդ հրնգամյակի վերջերում՝ 362, այդ թվում՝ 272 հայկական, 66 ադրբեջանական, 9 քրդական, 13 ռուսական, 2 ասորական ակումբներ և սոցիալիստական կուլտուրայի 6 տուն։ Դրանցից 280-ը պահվում էր տեղական բյուջեով, 82-ը՝ կոլտնտեսությունների և 32-ը՝ պրոֆմիության հաշվին[32]։ Այդ նույն ժամանակ հանրապետության գյուղերում գործում էին 349 մասսայական և ակումբային գրադարան՝ 144 հազար կտոր գրքաֆոնդով։

Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում էին գտնվում գյուղական կուլտուրսհիմնարկների զարգացման ու նրանց աշխատանքի խելացի կազմակերպման հարցերը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1938 թ. հոկտեմբերի 27-ին քննության առավ այդ հարցը։ Կենտկոմը բացահայտեց Արտաշատի, Շամշադինի, Մարտունու, Վեդու և այլ շրջանների քաղլուսաշխատանքներում տեղ գտած թերությունները, ձմռան ամիսներին որոշ ակումբների անգործության մատնվելը, կոլտնտեսությունների կողմից դրանց մի մասի օգտագործումը տնտեսական նպատակներով, ակումբային աշխատողների աննպատակահարմար տեղաշարժը և այլն։ Կենտկոմը կտրուկ միջոցառումներ մշակեց այդ թերությունների վերացման և գյուղում կուլտուր-լուսավորական աշխատանքների ուժեղացման համար։

1938 թ. աշնանը Հանրապետության բոլոր գյուղերում անցկացվեց ակումբա-գրադարանային աշխատանքների ստուգում, որի հետևանքով աշխատանքից ազատվեցին իրենց չարդարացնողները, արգելվեց ակումբային աշխատողների տեղաշարժը առանց լուսժողկոմատի համաձայնության, ինչպես նաև այլ հիմնարկներում նրանց համատեղ աշխատանքը։ Հանրապետության գյուղերում սկսեցին մասսայաբար բացվել նոր ակումբներ և խրճիթ-ընթերցարաններ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. հոկտեմբերի 27-ի և ՀԽՍՀ ժողկոմխորհի նոյեմբերի 4-ի որոշումներով հանրապետության գյուղերում վերաբացվեցին 365 խրճիթ-ընթերցարաններ, որոնք 1935 թ. վերջերից անհիմն պատճառներով փակվել էին[33]։ 1940 թ. հանրապետության գյուղական վայրերում գործում էր 407 գյուղական ակումբ, 365 խրճիթ-ընթերցարան, 496 կարմիր անկյուն, 23 շրջանային կուլտուրայի տուն, 119 ինքնուրույն մասսայական, 665 ակումբային և 827 դպրոցական գրադարան՝ 1.028.037 գրքային ֆոնդով[34]։

Լավագույն աշխատանքով աչքի էին ընկնում Ալավերդու շրջանի Ուզունլարի (Օձուն), Արտաշատի շրջանի Դարղալուի (Այգեզարդ), Դիլիջանի շրջա-

30 «Խորհրդային Հայաստան», 16. I. 1930։

31 «ՀԿ(բ)Կ ԿԿ հաշվետվությունը 9-րդ համագումարում», Երևան, 1934, էջ 77։

32 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 369, թ. 5։

33 «Սովետական մանկավարժ», 1940, № 11, էջ 56։

34 Նույն տեղում, էջ 47, «Культурное строительство Армянской ССР», стр. 101, ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 2, գ. 125, թ. 3։

նի Զարխեջի (Կույբիշև), Սիսիանի շրջանի Բռնակոթի, Կիրովականի շրջանի Շահալիի (Վահագն), Համզաշիմանի, Գորիսի շրջանի Քարահունջի, Մարտունու շրջանի Գյոլալդարայի (Վարգենիկ) և բազմաթիվ այլ գյուղերի ակումբներ։ Ապարանի շրջանի ակումբները 1939 թ. աշնանից մինչև 1940 թ. աշունը աշխատավորության շրջանում անցկացրել էին 646 հակակրոնական, ինչպես նաև ընթացիկ քաղաքականության և պաշտպանական թեմաներին նվիրված զեկուցումներ, թատերական ու գեղարվեստական ինքնագործունեության երեկոներ։ Այդ ժամանակաշրջանում Իջևանի շրջանի ակումբները կազմակերպել էին 810 միջոցառում[35]։

Այսպիսով, եթե նախասովետական Հայաստանի գյուղը բացարձակապես զուրկ էր կուլտուր-լուսավորական օջախներից՝ բացառությամբ 5.000 կտոր գրքային ֆոնդ ունեցող 12 գրադարանների, ապա սովետական իշխանության առաջին 20 տարիների ընթացքում, կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ, հանրապետության գյուղերը ծածկվեցին կուլտուր-լուսավորական հիմնարկների խիտ ցանցով։ Չկար գյուղ, որը չունենար 1—2 կուլտուր-լուսավորական հիմնարկ։

Գյուղական ակումբներն ու մյուս քաղլուսավորական հիմնարկները վիթխարի ներդրում ունեցան գյուղի կուլտուր-լուսավորական կյանքի կազմակերպման և զարգացման գործում։ Նախապատերազմյան հնգամյակի տարիներին այդ հիմնարկներն օգնեցին կուսակցությանը՝ գյուղում ծավալելու մարքս-լենինյան գաղափարախոսության պրոպագանդումը։ Նրանք մեծապես օգնեցին աշխատավորության մեջ անգրագիտության ու կիսագրագիտության վերացմանը, գյուղատնտեսական առաջավոր փորձի տարածմանը, կոլտնտեսությունների ամրապնդման և բերքատվության բարձրացման գործին, նոր կենցաղի արմատավորմանը։ Սեր և ձգտում առաջացնելով դեպի գիրքն ու գրագիտությունը, արվեստն ու տեխնիկան, քաղլուս հիմնարկները զգալապես նպաստեցին աշխատավորական մասսաներին լենինյան կուսակցության շուրջը համախմբվելու գործին։

СОЗДАНИЕ И РАЗВИТИЕ КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920—1940 гг.)

М. Г. МАРТИРОСЯН

Резюме

В дореволюционной армянской деревне, за исключением нескольких библиотек, не было других культурно-просветительных учреждений. Благодаря осуществлению ленинской национальной политики за короткий срок в армянских селах была создана большая сеть культурно-просветительных учреждений. В 1940 г. здесь уже действовало 407 клубов, 365 изб-читален, 496 красных уголков, 23 дома культуры, 119 самостоятельно-массовых, 665 клубных, 827 школьных библиотек. Эти учреждения сыграли большую роль в деле культурного развития армянской деревни и воспитания активных строителей социалистического общества.

35 «Խորհրդային Հայաստան», 5. X. 1940։